

# ՎԻՏԱՄԻՆԵՐ

Ուսուցիչ՝ Ս. Սարգսյան  
Ս. Գևորգյանի անվ. h189 ավագ դպրոց

Դեկավար՝ Լ.Ա. Սահակյան

Երևան  
2022թ

## **Բովանդակություն**

Ներածություն.....
Գլուխ1.Վիտամինների օգտագործման և հայտնաբերման առանձնահատկությունները.....
Գլուխ 2.ՎԻՏԱՄԻՆ Ը-ի (ասկորբինաթթվի) որոշումը
Եզրակացություն.....
Օգտագործված գրականության ցանկ.....

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի

արդիականությունը:

Սույն

աշխատանքի

արդիականությունն պայմանավորված է մարդու կյանք և գործունեության համար անհրաժեշտ վիտամինների ուսումնասիրման անհրաժեշտության հետ: Վիտամին են անվանում կենսաբանորեն ակտիվ այն միացությունները, որոնք ձարպերի, ածխաջրերի, սպիտակուցների և հանքային նյութերի համակցությամբ անփոխարինելի դեր են կատարում կենդանի օրգանիզմի նյութափոխանակության համար:

Վիտամինները ոչ մեծ քանակությամբ օրգանիզմ են ներթափանցում սննդի միջոցով և յուրացվում թթվային միացությունների միջոցով (ամիդային, եթերային, նուկլեինային և այլն): Այդ թթվային միացությունները, միանալով սպիտակուցներին, արտադրում են ֆերմենտներ (բիոկատալիզատորներ), որոնք խթանում են տարաբնույթ նյութերի սինթեզումն օրգանիզմում:

Վիտամիններն ակտիվորեն ներազդում են բոլոր օրգանների վրա, մասնակցում նյութափոխանակության և նյարդառեֆլեկտոր համակարգի կարգավորմանը: Մեծ է նաև վիտամինների դերը տարբեր հիվանդությունների բուժման գործում: Մեր օրերում հայտնի են մոտ 100 ֆերմենտներ, որոնց մոլեկուլների մեջ կան նաև վիտամիններ: Վիտամինները հիմնականում տորսիկ չեն, սակայն դրանցից մի քանիսը (օրինակ, վիտամիններ A-ն և D-ն), այնուամենայնիվ, դեղաչափերի չարաշահման պարագայում օրգանիզմում որոշակի խանգարումներ կարող են առաջացնել: Այս խանգարումներն անվանում են հիպերվիտամինոզ:

Աշխատանքի նպատակներն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ու լուսաբանել մարդու կյանքի և գործունեության համար անհրաժեշտ վիտամինների էռությունը և ներկայացնել ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել վիտամինների դերը մարդու օրգանիզմում,

2. Ներկայացնել մարդու կյանքի և գործունեության համար կարևորագույն վիտամիններին բնորոշ առանձնահատկությունները:


**Աշխատանքի օբյեկտը և առարկան:** Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում վիտամինների ամբողջությունը, իսկ աշխատանքի ուսումնասիրության առարկան՝ մարդու կյանքի և գործունեության համար անհրաժեշտ վիտամինները:

## ԳԼՈՒԽ 1. ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՅՏԱՐԵՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վիտամիններ (լատ.՝ vita, «կյանք»), կենսաբանորեն ակտիվ օրգանական և տարրեր կառուցվածք ունեցող միացություններ, որոնք անհրաժեշտ են օրգանիզմի բնականոն նյութափոխանակության ու կենսագործունեության համար և այդ առումով անփոխարինելի են: Ակտիվ օրգանական միացությունն անվանվում է վիտամին, եթե տվյալ օրգանիզմը չի կարողանում այն սինթեզել անհրաժեշտ քանակությամբ և ստանում է սննդի միջոցով: Այս պատճառով «վիտամին» տերմինն պայմանական է կախված արտաքին միջավայրի պայմաններից և օրգանիզմից

Օրինակ ասկորբինաթթուն՝ վիտամին C-ի տարատեսակներից մեկը, վիտամին է մարդու, բայց ոչ կենդանի օրգանիզմների մեծամասնության համար: Որոշ առողջական խնդիրների դեպքում վիտամինների հավելումը կարևոր է, բայց շատ քիչ փաստեր են հայտնի առողջ մարդու կողմից վիտամինների ընդունման օգտակարության վերաբերյալ: Կան կազմությամբ վիտամիններին մոտ նյութեր, նախավիտամիններ, որոնք, մտնելով մարդու օրգանիզմ, փոխարկվում են վիտամինների:

Վիտամինները չեն ընդգրկում լրացուցիչ սննդանյութերը՝ հանքային աղերը, ճարպաթթուները և ամինաթթուները, որոնք անհրաժեշտ են ավելի մեծ քանակով, քան վիտամինները և ոչ էլ առողջությունը պահպանելու համար անհրաժեշտ բազմաթիվ այլ սննդանյութեր: Ներկայումս լայնորեն ընդունված են 13 տարբեր վիտամիններ, որոնք դասակարգվում են ոչ թե ըստ կառուցվածքի, այլ ըստ իրենց կենսաբանական և քիմիական ակտիվության: Մրա պատճառով, յուրաքանչյուր վիտամին կազմված է կենսաբանորեն ակտիվ տարբեր բաղադրիչներից՝ վիտամերներից: Օրինակ՝ վիտամին A-ն, ներառում է ուստինալը, ուստինոլը և 4 այլ անհայտ կարոտինիդներ:



Վիտամերները օրգանիզմում կարող են փոխակերպվել վիտամինի ակտիվ ձևին, ինչպես նաև, սովորաբար, կարող են փոփակերպվել մեկը մյուսին:

Վիտամինները                  մասնակցում                  են                  նյութափոխանակության  
կարգավորմանը, ֆերմենտների առաջացմանը, խթանում են օրգանիզմում ընթացող քիմիական ռեակցիաները: Ազդում են նաև սննդանյութերի յուրացման վրա, նպաստում թշխների բնականոն աճին և ամրող օրգանիզմի զարգացմանը: Լինելով ֆերմենտների բաղկացուցիչ մաս՝ վիտամիններն ապահովում են դրանց բնականոն գործառույթները և ակտիվությունը: Որոշ վիտամիններ, օրինակ վիտամին D-ն, կատարում են հորմոնանման ֆունկցիա՝ կարգավորելով հանքային նյութերի փոխանակությունն օրգանիզմում կամ ինչպես վիտամին A-ն է՝ թշխների և հյուսվածքների աճն ու տարբերակումը: Վիտամինների ամենամեծ խումբը Յ վիտամինային կոմպլեքսն է, որոնք խաղում են ֆերմենտների կոֆակտորների դեր՝ կատարելով նյութափոխանակային ռեակցիաները: Այս առումով, վիտամինները մտնում են ֆերմենտների կազմի մեջ որպես պրոսթետիկ խմբի մի մաս: Օրինակ՝ բիոտինը ճարպաթթուների ստեղծմանը մասնակցող ֆերմենտների կազմի մեջ է մտնում: Վիտամինները կարող են նաև կատարելում խաղալ կոֆերմենտների դեր՝ տեղափոխելով քիմիական ֆունկցիոնալ խմբեր կամ էլեկտրոններ մի մոլեկուլից՝ մյուսը: Օրինակ՝ ֆոլաթթուն թջում կարող է տեղափոխել մեթիլ, ֆորմիլ և մեթիլեն խմբերը: Չնայած վիտամինների ֆերմենտ-սուրստրատ ռեակցիաներում մասնակցելով ֆունկցիան առավել հայտնին է, վիտամինների մյուս ֆունկցիաները նույնպես հավասարապես կարևոր են:

Մինչև 1930-ականների կեսերը, երբ առաջին անգամ կիսասինթետիկ ճանապարհով ստացան վիտամին B-ն և C-ն, վիտամինների միակ աղբյուրը սնունդն էր: 20-րդ դարի կեսից վիտամինները սկսվեցին արդեն քիմիական ճանապարհով սինթեզվել և վաճառվել, առանձին կամ մուլտիվիտամինային կոմպլեքսների ձևով: Վիտամինների կառուցվածքային ակտիվությունը, ֆունկցիան և առողջության մեջ դերը ուսումնասիրող գիտությունն անվանվում է վիտամինոլոգիա:

Որևէ վիտամինի անբավարարությունը կամ բացակայությունը հանգեցնում է նյութափոխանակության խանգարումների, որոնց հետևանքով նվազում է մարդու աշխատունակությունը,

դիմադրողականությունը

տարբեր հիվանդությունների, շրջակա միջավայրի անբարենպաստ գործոնների նկատմամբ:

Որոշ սննդամթերքներ հարուստ են մեկ կամ մի քանի վիտամիններով, բայց զուրկ են մյուսներից: Ուստի միօրինակ սնվելիս կամ վիտամինազուրկ սննդամթերք օգտագործելիս, ինչպես նաև օրգանիզմի կողմից վիտամինների յուրացման շարժընթացի խանգարման դեպքում կարող է առաջանալ վիտամինային անբավարարություն (թերվիտամինություն (հիպովիտամինոզ), ավիտամինություն): Վիտամինների ավելցուկային ընդունումը նույնպես կարող է հանգեցնել հիվանդությունների՝ գերվիտամինությունների(հիպերվիտամինոզ): Դրանք կարող են առաջանալ որևէ վիտամինի մեծ չափաքանակի միանվագ ընդունումից (սովորաբար վիտամինային պատրաստուկի ձևով) կամ օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջները գերազանցող քանակությամբ երկարատև օգտագործելիս:

Վիտամինների պահանջը բարձրանում է օրգանիզմի աճման շրջանում, հիվանդության ժամանակ և դրանից հետո, ֆիզիկական ու մտավոր ծանրաբեռնվածության ընթացքում (օրինակ՝ սպորտով պարապելիս, նյարդահուզական մեծ լարվածություն պահանջող աշխատանքներ կատարելիս), ինչպես նաև ցրտի երկարատև ազդեցության դեպքում: Տարիքի հետ օրգանիզմում վիտամինների յուրացումը դժվարանում է:

Սկզբում վիտամինները պայմանականորեն նշանակվում են լատիներեն այբուրենի տառերով՝ A, B, C, D, E, K, P և այլն, այնուհետև տրվեցին միջազգային անուններ, որոնք արտացոլում են այդ նյութերի քիմիական կառուցվածքը: Վիտամինները բաժանվում են 3 խմբերի՝ ջրալույծ, ճարպալույծ և վիտամինանման նյութեր: Ջրալույծ վիտամիններ՝

- B խմբի բոլոր վիտամինները,
- Վիտամին C-ն,
- Վիտամին PP-ն:

Ճարպալույծ վիտամիններ՝

- Վիտամին A-ն,
- Վիտամին D-ն,
- Վիտամին E-ն,

- Վիտամին K-ն:

**Զրալույծ վիտամիններից** առավել հայտնի է C վիտամինը (ասկորբինաթթու), որն առկա է մի շաբթ ֆերմենտների կազմի մեջ: C վիտամինի բացակայության պարագայում օրգանիզմում զարգանում է ծանր ավիտամինոզ՝ լնդախտ (ցինգա)

Մարդը թուլանում է, նվազում է նրա կայունությունը տարբեր վարակների և շրջակա միջավայրի անբարենպաստ պայմանների նկատմամբ: Լնդերը սկսում են արյունաթորել, ատամները՝ շարժվել և, ի վերջո՝ ընկնում են: Առավել շատ C վիտամին պարունակվում

հաղարջի պտուղներում, կիտրոնում, կաղամբում (այդ թվում՝ թթու): Մարդուն օրական անհրաժեշտ է 50-100մգ C վիտամին: Վարակիչ անգամ, քանի որ C վիտամինն առկա է հակամարմինների առաջացմանը նպաստող ֆերմենտների կազմի մեջ:

**Ճարպալուծ վիտամինների** շարքում առավել կարևորվում է A վիտամինը, որն անհրաժեշտ է էպիթելիալին հյուսվածքների բնականոն աճի համար: Բացի այդ, A վիտամինը մասնակցում է տեսողական գունակ ռողոպսինի ձևավորումն ապահովող ֆերմենտների աշխատանքին: A ավիտամինոզի կամ թերպվիտամինոզի պարագայում կարող են զարգանալ մաշկի կամ լորձաթաղանթների խոցեր, «հավկուրություն»՝ մթնշաղային տեսողության խանգարում: A վիտամինը պարունակվում է մթնշաղային լյարդում, կենդանական ծագմամբ մթերքներում՝ կարագում, պանրում: Սակայն բույսերում այս վիտամինը կարող է սինթեզվել նրանցում պարունակվող դեղին գունանյութից՝ կարոտինից: Կարոտինը պարունակվում է գազարում, կարմիր պղպեղում, ծիրանում, դդմի մեջ և կարմիր գույնի այլ մրգերում ու բանջարեղենում: Կարոտինն ավելի լավ յուրացվում է եփելուց հետո, A վիտամինի վերածվում է բարակ աղիներում:

### **Վիտամինի քանակի խանգարում**

Վիտամինների քանակի փոփոխումը, խանգարումը օրգանիզմում կապված է երեք հիմնական պաթոլոգիական վիճակների հետ.

- Վիտամինի պակաս - **հիպովիտամինոզ** (լատ. *hypovitaminosis*)
- Վիտամինի ավելցուկ - **հիպերվիտամինոզ** (լատ. *hypervitaminosis*)

- Վիտամինի բացակայություն - ավիտամինոզ (լատ. *avitaminosis*).

### *A վիտամին (ռետինոլ)*



Անհրաժեշտ է լիարժեք տեսողության և օրգանիզմի բնականոն աճի համար: A վիտամինի անբավարության հիմնական հատկանիշը լուսավախությունն է, գիշերային կուրությունը (հավկուրություն): A վիտամինը պարունակվում է կենդանական ծագման մթերքներում՝ կենդանիների և ձկների յարդում, խավիարում, ձկան յուղում, կարագում և յուղում, պանրում, ձվի դեղնուցում: Բուսական մթերքներում պարունակվում է նախավիտամինների՝ գունանյութերի (պիզմենտներ), կարոտինոիդների ձևով, որոնցով հարուստ են գազարը, լոլիկը, կարմիր տաքդեղը, կանաչ սոխը, թթվածովուկը, հազարը, մասուրը, ծիրանը, չիչլանը, արոսենու պտուղները և այլն:

### *B<sub>1</sub> վիտամին (թիամին)*

Անհրաժեշտ է հատկապես օրգանիզմում ածխաջրերի նյութափոխանակության համար: Թիամինի բացակայության կամ զգալի պակասի հետևանքով առաջանում է նյարդային համակարգի ծանր հիվանդություն՝ բերի-բերի առավել հարուստ են գարեջրի, հացի չոր և խտացված խմորիչները, ինչպես նաև լոբազգի և հացազգի բույսերից պատրաստված սննդամթերքը: Այն պարունակվում է առավելապես հատիկների թաղանթում և սաղմում, ուստի սննդի մեջ պետք է ընդգրկել ձավարեղեն (հատկապես՝ հնդկացորեն, վարսակածավար), կոպիտ աղացած այուրից թխված հաց:

### *B<sub>2</sub> վիտամին (ռիբոֆլավին)*

Մասնակցում է օրգանիզմում կենսաբանական օքսիդացման շարժընթացներին: Նպաստում է վերքերի ապաքինմանը, ապահովում է լուսային և գունային տեսողությունը: Անբավարարության դեպքում նկատվում են շրթունքների չորություն և ձաքեր, անկյուններում՝ խոցեր, մատների վրա՝ խոր ձաքեր, դանդաղում է վերքերի ապաքինումը: Մեծ քանակությամբ B<sub>2</sub> վիտամին պարունակվում է խմորիչներում, յարդում, ինչպես նաև կաթում և կաթնամթերքում: B<sub>2</sub> վիտամինը տաքացնելիս կայուն

է, բայց հեշտությամբ քայրայվում է լույսի ազդեցությամբ: В<sub>2</sub> վիտամինները կարևոր են մարդու կենսագործունեության և առողջ ապրելակերպի համար:

### **B3 կամ PP վիտամին (նիկոտինամիդ, նիկոտինաթթու)**



Մասնակցում է օրգանիզմում ընթացող կենսաբանական օքսիդացմանը: Բավական քանակությամբ պարունակվում է յարդում, երիկամներում, խմորիչներում, մսում, կաթում, ինչպես նաև ոլոռում, բակլայում, ցորենի ալյուրում, հնդկածավարում, սնկերում: Ավելի լավ է յուրացվում կենդանական ծագման մթերքներից:

### **B5 վիտամին (պանտոտենաթթու)**

Կարևոր նշանակություն ունի նյութափոխանակության համար: Կանոնավորում է նյարդային համակարգի գործունեությունը, մակերիկամների և վահանագեղձի գործառույթները: Տարածված է բնության մեջ, բուսական և կենդանական հյուսվածքներում: Օրգանիզմում B<sub>5</sub> վիտամինի անբավարարության կլինիկական ախտանշաններ չեն հաստատվել:

### **B6 վիտամին (պիրիդօքսին)**

Մասնակցում է ամինաթթուների փոխանակությանը, որոնք սպիտակուցների բաղկացուցիչ մասն են: Անբավարարությունից առաջանում է վաղ մանկական տարիքի երեխանների աճի կասեցում, սակավարյունություն, գերզրգովածություն: B<sub>6</sub> վիտամինը պարունակվում է մսում, ձկնեղենում, կաթում, խոշոր եղջերավոր կենդանիների յարդում, խմորիչներում և բուսական շատ մթերքներում:

### **B<sub>9</sub> վիտամին (ֆոլացին)**

Մասնակցում է որոշ ամինաթթուների, նուկլեինաթթուների սինթեզին, խթանում ուկրածուծի արյունաստեղծման գործառույթը, նպաստում B<sup>12</sup> վիտամինի յուրացմանը: Անբավարարության դեպքում առաջանում են ծանր սակավարյունություն, ստամոքսաղիքային և զգացողության խանգարումներ: Ֆոլացինի խմբի կարևոր ներկայացուցիչը ֆոլաթթուն է, որը տարածված է բուսական և կենդանական աշխարհում: Առավել շատ պարունակվում է յարդում, երիկամներում,

բույսերի կանաչ տերևներում: Սինթեզվում է բույսերի, շատ բակտերիաների և սնկերի կողմից: Մարդու աղիների միկրոօրգանիզմները սինթեզում են մեծ քանակությամբ ֆուլարթու, որը բավարարում է օրգանիզմի պահանջը:

#### *B12 վիտամին (ցիանակորալամին)*

Մասնակցում է նուկլեինայթուների սինթեզին, արյունաստեղծմանը: Անբավարարության դեպքում զարգանում է սակավարյունություն: Զգալի քանակությամբ պարունակվում է յարդում, երիկամներում, ձկնեղենում (հատկապես՝ յարդում և խավիարում), քիչ քանակությամբ՝ մսում, կաթում, կաթնաշոռում, պանրում, ձվի դեղնուցում:

#### *B15 վիտամին (կալցիումի պահպանատ)*


Քիմիական կազմությունը և ազդեցության մեխանիզմը բավարար ուսումնասիրված չեն: Բուժիչ նպատակով կիրառում են աթերոսկլերոզի, արյան շրջանառության խանգարումների, յարդաբորբերի և այլ հիվանդությունների ժամանակ:

#### *D վիտամին (կալցիֆերոլներ)*



Օրգանիզմում փոխարկվում է հորմոնանման նյութ, որը մասնակցում է կալցիումի և ֆոսֆորի աղերի յուրացմանը, ուկրային հյուսվածքում ոյրանց կուտակմանը: D վիտամինի մեծ պահանջ ունեն հատկապես 3-4 տարեկան երեխաները (անբավարարությունից մանկական օրգանիզմում զարգանում է ռախիտ հիվանդությունը): Սովորաբար D վիտամինը առաջանում է մարդու մաշկում՝ ուլտրամանուշակագույն ճառագայթների ներգործությամբ: D վիտամինի աղբյուր է թյունոսի, ձողաձկան և այլ ձկների յարդի ճարպը: Ոչ մեծ քանակությամբ պարունակվում է կարագում, ձվի դեղնուցում, ձկան յուղում: Մյուս կենդանական մթերքներն աղքատ են այս վիտամինից, իսկ բուսական մթերքները, որպես կանոն, բոլորովին չեն պարունակում: Մեծահասակ մարդկանց պահանջը D վիտամինի նկատմամբ մեծ չէ, սակայն այն մեծանում է ցերեկային լույսի պակասի դեպքում (ստորգետնյա աշխատանքներ կատարելիս, հյուսիսում բնակվելու դեպքում): Զմռանն

երեխաները (անբավարարությունից մանկական օրգանիզմում զարգանում է ռախիտ հիվանդությունը): Սովորաբար D վիտամինը առաջանում է մարդու մաշկում՝ ուլտրամանուշակագույն ճառագայթների ներգործությամբ: D վիտամինի աղբյուր է թյունոսի, ձողաձկան և այլ ձկների յարդի ճարպը: Ոչ մեծ քանակությամբ պարունակվում է կարագում, ձվի դեղնուցում, ձկան յուղում: Մյուս կենդանական մթերքներն աղքատ են այս վիտամինից, իսկ բուսական մթերքները, որպես կանոն, բոլորովին չեն պարունակում: Մեծահասակ մարդկանց պահանջը D վիտամինի նկատմամբ մեծ չէ, սակայն այն մեծանում է ցերեկային լույսի պակասի դեպքում (ստորգետնյա աշխատանքներ կատարելիս, հյուսիսում բնակվելու դեպքում): Զմռանն




օրգանիզմում D վիտամինի առաջացումը կարելի է խթանել՝ քվարցային լամպով ճառագայթահարելով:

Կանխարգելիչ

նպատակով վաղ մանկական տարիքի երեխաներին հաճախ նշանակում են D վիտամինի պատրաստուկներ, որոնք կարելի է

օգտագործել միայն բժշկի հսկողությամբ, քանի որ չափաքանակը գերազանցելիս կարող են բարդություններ առաջանալ:

### ***E վիտամին (սոլիֆերոլներ)***



Խթանում է մկանային գործունեությունը

և սեռական գեղձերի ֆունկցիաները: Պարունակվում է ձեթերում, գետնանուշի, ոլոռի, եղիպտացորենի, սոյայի սերմերում, հազարում, սպանախում, լյարդում, ձվի դեղնուցում, կաթում:

### ***K վիտամին (ֆիլոքինոններ)***

Մասնակցում է արյան մակարդմանը: Անբավարարությունն առաջացնում է արյունահոսություն՝ քթից, լնդերից, ստամոքսաղիքային համակարգի օրգաններից: Պարունակվում է սպանախի, կաղամբի, եղինջի և այլ բույսերի կանաչ մասերում, գազարում, լոլիկում: Կենդանական ծագման մթերքները (բացի լյարդից) K վիտամին գրեթե չեն պարունակում: Հիմնականում կիրառվում են սինթետիկ պատրաստուկները՝ վիկասոլը և սինկավիտը:

Վիտամինանման նյութերը կենսաբանորեն ակտիվ միացություններ են: Դրանցից են կենսաֆլավոնիդները (կանոնավորում են մազանոթների թափանցելիությունը), խոլինը [ունի ձարպահակ (լիպոտրոպ) ազդեցություն], ինոզիտը (մասնակցում է ածխաջրերի փոխանակությանը), պանզամաթթուն (որի կալցիումական աղն ունի հակաթերթվածնային ազդեցություն) և այլն: P վիտամին (կենսաֆլավոնիդներ). Նյութերի խումբ է, որը բարձրացնում է մազանոթների պատերի կայունությունը, վերացնում դրանց բարձր թափանցելիությունը: Այդ նյութերից են ռուտինը, տանինը: Առավել արդյունավետ են C վիտամինի գուգակցությամբ: Պարունակվում են թեյում


(առանձնապես՝ կանաչ), մասուրում, կիտրոնում, խուրմայում, սև հաղարջում, սև արոսենու պտուղներում, խաղողում, սալորում, տարղեղում, հնդկածավարում:

**Աղյուսակ 1. Վիտամինների օրական պահանջը**

Վիտամին	Անվանումը	Օրական անհրաժեշտությունը (չափահաս մարդուն)
A	<u>Ռետինոլ</u> (Retinol)	900մկգ
B <sub>1</sub>	<u>Թիամին</u> (Thiamine)	1,5մգ
B <sub>2</sub>	<u>Ռիբոֆլավին</u> (Riboflavin)	1,8մգ
B <sub>3</sub> (PP)	<u>Նիկոտինաքրեոն</u> (Niacin)	20մգ
B <sub>4</sub>	<u>Խոլին</u> (Choline)	425-550մգ
B <sub>5</sub>	<u>Պանտոհենաքրեոն</u> (Pantothenic acid)	5մգ
B <sub>6</sub>	<u>Պիրիդոքսին</u> (Pyridoxine)	2մգ
B <sub>7(H)</sub>	<u>Բիոտին</u> (Biotin)	50մկգ
B <sub>8</sub>	<u>Ինոզիտոլ</u> (Inositol)	500մգ
B <sub>9</sub>	<u>Ֆոլիաքրեոն</u> (Folic acid)	400մկգ
B <sub>10</sub>	<u>n-Ամինաքրենօքաքրեոն</u> (n-Aminobenzoic acid)	հաստատված չէ
B <sub>11</sub>	<u>Լինկարնիտին</u> (Carnitine)	300մգ
B <sub>12</sub>	<u>Ցիանկորալամին</u> (cobalamin)	3մկգ
B <sub>13</sub>	<u>Օրոտաքրեոն</u> (Orotic acid)	0,5-1,5մգ
B <sub>15</sub>	<u>Պանգամաքրեոն</u> (Pangamic acid)	50-150մգ
B <sub>17</sub>	<u>Ամիգդալին</u> (Amygdalin)	
C	<u>Ասկրինաքրեոն</u> (Ascorbic acid Ascorbic acid)	90մգ
D	<u>Կալցիֆերոլ</u> (Calciferol)	10-15մկգ
E	<u>α-, β-, γ-տոկոֆերոլներ</u> (Tocopherol)	15մգ
F	<u>Օմեգա-3 և Օմեգա-6 ճարպաքրուների</u> տրիգլիցերիդների խառնուրդ	տվյալներ չկան
K	<u>Ֆիլոքինոն</u> (phylloquinone)	120մկգ

N	Լիպուկաթռու (Lipoic acid)	30մկգ
P	Բիոֆլավոնուիներ (Bioflavonoids)	տվյալներ չկան
U	Մեթիոնին (Methionine)	

### C վիտամին (ասկորբինաթռու)



Կարևոր դեր է խաղում  
օրգանիզմում ընթացող  
օքսիդավերականգնման  
գործընթացներում: C վիտամինի  
անհրաժեշտ քանակությունը  
(մեծահասակների համար՝ օրական 50–  
100 մգ, երեխաների՝ 30–70 մգ)

օրգանիզմը պետք է ստանա սննդի հետ: C վիտամինի անբավարարության սկզբնական շրջանում նկատվում են ընդհանուր թուլություն, քնկոտություն, զլխապտույտ, մարդը արագ հոգնում է: Շրթունքները, ականջները, քիթը կապտում են, լնդերը՝ ուռչում, խոցոտվում և արյունահոսում, շարժվում և ընկնում են ատամները: Կտրուկ թուլանում է օրգանիզմի դիմադրողականությունը: Դարեր շարունակ ճանապարհորդությունների ժամանակ ծովային նավերի վրա անսպասելիորեն հայտնվում էր լնդախտ կոչվող սոսկալի հիվանդությունը: Սկսում էին արյունահոսել մարդկանց լնդերը, շարժվել ատամները: Նավաստիները թուլանում և ուժասպառ վայր էին ընկնում: Լնդախտն ավելի շատ զնի էր խլում, քան նավաբեկությունները: Այդ ժամանակ չգիտեին, որ լնդախտն առաջանում է սննդի մեջ C վիտամինի պակասից: XVI դարում բժիշկներն սկսեցին մշակել լնդախտի բուժման եղանակներ: Ճանապարհորդության մեկնելիս անզլիական ոազմածովային նավատորմում, որպես սննդի կարևորագույն մաս, վերցնում էին կիտրոն: XVIII դարում ռախիտի բուժման համար սկսեցին լայնորեն օգտագործել ձողաձկան լյարդի ճարպը: Հին չինական գրավոր աղբյուրներում հիշատակվում է հավկուրություն հիվանդությունը, որն արտահայտվում էր մթության մեջ մարդու տեսողության վատացմամբ: Այս հիվանդության բուժումը՝ սննդի մեջ լյարդի օգտագործմամբ, առաջինն առաջարկել է Հիպոկրատը:

Բուժիչ նպատակով վիտամինների օգտագործումը՝

Վիտամինաբուժությունը, նախկինում կիրառվում էր դրանց անբավարարության ժամանակ: XX դարի կեսերին վիտամինաբուժության շրջանակն զգալիորեն ընդլայնվեց. վիտամիններն սկսեցին օգտագործել ինչպես սննդի, այնպես էլ անասնակերի վիտամինացման համար: Ժամանակակից բժշկության մեջ լայնորեն կիրառվում են նաև պոլիվիտամինները, որոնցից են պիկովիտը, մուլտինը, յունիկապը, մուլտի տաբսը, բևի պլեքսը և այլն: Վիտամինները, որպես ինքնուրույն քիմիական նյութ, հայտնաբերել են ուս բժիշկ Ն. Լունինը 1880 թ-ին: Նա պարզել է, որ օրգանիզմի բնականոն գործունեության համար, բացի սննդի հիմնական բաղկացուցիչ մասերից (սպիտակուցներ, ձարապեր, ածխաջրեր), անհրաժեշտ են նաև այլ նյութեր, որոնց բացակայությունը հանգեցնում է հիվանդությունների կամ մահվան: Այնուհետև նիդեռլանդացի բժիշկ, մանրէարան Ք. Էյկմանը ցույց է տվել, որ մարդկանց բերի-բերի հիվանդության պատճառը թեփահանված բրնձի օգտագործումն է, և այն կարելի է բուժել բրնձի թեփի պատրաստուկներով: 1912 թ-ին լեհ բժիշկ Կ. Նունկը բրնձի թեփից անջատել է մի բյուրեղային նյութ, որը բուժում էր բերի-բերին, ցույց տվել, որ այն պարունակում է ազոտ (ամին խմբի ձևով), և անվանել է վիտամին:



Վիտամին C -ի օրական նորման կազմում է 60 մգ: (Ծխմիների համար 100 մգ): Խնչակ՝ ս առանց մեծ ջանքեր գործադրելու ապահովես ինքը քեզ վիտամին C-ով: Կարող ես բավարարել այդ վիտամինի օրական պահանջը հետևյալ մթերքների օգնությամբ:

Պապայա (1 հատ, միջին, թարմ) 187 մգ

Դեղին պղպեղ (1 բաժակ, կտրատած, հում) 170 մգ

Կարմիր պղպեղ (1/2 բաժակ, կտրատած, հում) 141 մգ

Դեղձ (1/2 բաժակ, շերտատած, սառեցրած) 117 մգ

Սեխի-փոքր (1/2, թարմ) 116 մգ

Կանաչ կծու պղպեղ Չիլի (1 հատ, 109 մգ

Նարնջի հյութ (3/4 բաժակ, թարմ քամած) 93 մգ

Նարինջ (1 հատ միջին) 69 մգ

Լոռամբզի հյութ (3/4 բաժակ) 67 մգ

Թուրինջի հյութ (3/4 բաժակ, թարմ քամած) 62 մգ

Կաղամբ բրոկկոլի (1/2 բաժակ, եփած) 58 մգ

Ելակ (1/2 բաժակ, թարմ) 47 մգ

Ծխողներին անհրաժեշտ է վիտամին C -ի ավելի մեծ քանակ, քանզի նրանք ներշնչում են ամենավսասակար և կերտուտ օր: Այդպես է գտնում դիետոլոգների ամերիկյան ասոցիացիայի անդամ, գիտնական, քիմիկոս Ռոբերտ Ջեկորը: Վիտամին C -ն՝ այդ լուծողի հակաօքսիդանտը, օգնում է մաքրել օրգանիզմը տոքսիններից արտադրելով հակաօքսիդանտ զյուտաթիոն: Հակաօքսիդանտները սպանում են առողջ քիչներին սպառնացող ազատ ռադիկալներին: Վիտամին C -ն ոչ միայն չեղոքացնում է ազատ ռադիկալները, այլև հեռացնում է այլ պոտենցիալ տոքսիններ, որոնք օրգանիզմ են մտնում սննդի կամ դեղորայքի հետ: Վիտամին C -ն ակտիվացնում է իմուն համակարգը՝ պաշտպանելով մեզ վարակներից և քրոնիկ հիվանդություններից:



։ Անձուվզը յումի շ՝ ՚Խմբաց յումի լ՝ ՚տվածութի Հ6 կ յասկառաւմուի մովզո ոզի ։ Այսպէս դում կ յատեղածք դիմ ՚յավլուի յումեվլով չ58 յատուր կ ծյու դումելումուում վետու ։ Եղ դմկանունումօհու կ եղուսունունուու գոհմասիտունուի մումելուի վետու ։ Վաղու վաղուստու տուետ եսօմկետուուի Նմկածք վյեվում մուս ՚տղյիւվի դիսեմծունուու կ Շ ՚ովուուսուվի յումեվլով Հ11 ։ Ե յասկառաւմուի մովզո ոզի ՚Վաղու վաղուստու ։

:Աղիւլոց օ դ մաստովշատ յումի և՝ ովկալուկ ՀԻ Կ յուսկողուսմուն  
ըլլեստի կզՈ :Աղջիուղտ իվելորեմծ վետիինտմծ Կ յուսկեպտուկուկ նմս ‘Վ-Վ ղվյուտվի Կ յուսկօռուկի  
յուսեպտմծ նղվտամուկ :Մորուկ վկմքմ Կ մոկատեօղու ոդինդպ ՛Նժօռիինտամուկ ղվճմղու  
վյեպտմծ յակիմմմմծ ղվմղմյուկ վմղյուստու տուբու ովլուտ ՎՇ Խուսէ /նղվտամուկ/նմղուտղյուկի  
ոհութեանվարութիւննասուու ձոր որմթյունիմմումք Ախումիլո-ոռումիլու:

Վիտամինային անբավարության պատճառներից մեկն այն է, որ անտեսվում կամ հետին պլան են մղվում հանձնարարված նորմերը՝ կապված աշխարհագրական, կլիմայական, ազգային առանձնահատկությունների և վտանգավոր սովորությունների, անասնապահական, բանջարաբուժանային և այգեգործական մթերքների վատ մատակարարման, նրանց գների անմատչելիության, կամ, մոդայիկե սննդակարգերին հետևելու հետ։ Դրա հետ մեկտեղ գոյություն ունեն մի շարք օբյեկտիվ օրինաչափություններ, որոնք խանգարում են ժամանակակից մարդու սնունդը դարձնել լիարժեք վիտամինների և մյուս էսենցիալ սննդանյութերի պարունակության տեսակետից։

Այդ օրինաչափություններից է արդի ժամանակաշրջանում աշխատանքի մերենայացումն ու ավտոմատացումը, կոմունալ-կենցաղային և տրանսպորտային տնտեսությունների զարգացումը։ Դրանց արդյունքում բնակչության հիմնական զանգվածի շուրջօրյա էներգածախսն անշեղորեն իջել է մինչև 2000-3000 կվալ-ի, ինչը տասնամյակներ առաջ ավելի քան 1,5-2անգամ բարձր էր։ Սակայն նյարդա-հուզական լարվածության, էկոլոգիական անբարենպաստ գործոնների ազդեցությանպայմաններում անփոխարինելի սննդանյութերի՝ որպես կարևորագույն պաշտպանիչ գործոնի պահանջը ոչ միայն չի պակասել, այլ ընդհակառակը բարձրացել է։

## Աղյուսակ 2. Օրգանիզմում որոշ վիտամինների հիմնական ֆունկցիաները, նրանց սննդային աղբյուրները, օրվա պահանջը

### Վիտամինը,

Նրա օրվա  
պահանջը

Վիտամին Ա-ի  
համար՝

Վիտամին  
A-ն և նրա  
նախավիտամին,  
բուսական  
նարնջագույն  
պիզմենտ-  
կարոտինը

Օրվա պահանջը՝  
0,8-1 մգ

Սննդային կարևոր  
աղբյուրները

Կենդանիների և  
ձկների յարդը,  
խավիարը, կարագը, ձվի  
դեղնուցը,  
կաթնամթերքները, B-  
կարոտինի համար՝  
նարնջագույն,  
դեղնակարմրավուն և  
կանաչ բանջարեղենն ու  
միրզը՝ գազարը, կարմիր  
պղպեղը, ծիրանը,  
նարինջը, դեղձը, դդումը,  
կանաչ ոլոռը,  
սպանախը, կանաչ սոխը,  
շիշիանը:

Կենդանիների և  
ձկների յարդը, ձողա-  
ձկան յարդի յուղը(ձկան

Ֆիզիոլոգիական  
նշանակությունը

Ռետինոլ համարվում է  
աճի վիտամին, մասնակցում  
է լորձաթաղանթների կազմի  
մեջ մտնող գյուկոսայիտա-  
կուցների սինթեզին՝ ապա-  
հովելով աչքերի, շնչուղիների  
մարտղական համակարգի  
և միզասեռական ուղիների  
լորձաթաղանթների նորմալ  
գործունեությունը։ Մտնում է  
տեսածիրանի մեջ՝ ապա-  
հովելով աչքերի ադապտա-  
ցիան միջավայրի տարրեր  
լուսավորվածությանը։

Կարգավորում է Ca-ի և P-  
ի փոխանակությունը, ապա-  
հովում է այդ տարրերի ներ-

Անբավարարության  
նշանները

Մթնաշաղային  
տեսողության վատա-  
ցում, հավկուրություն,  
տեղի է ունենում  
աչքերի, մաշկի, շնչու-  
ղիների լորձաթաղան-  
թի էպիթելիային հյուս-  
վածքի եղջերացում,  
ինֆեկցիաների նկատ-  
մամբ զգայունության  
բարձրացում, երեխա-  
ների աճի դանդաղում։  
Ուկորների հիվան-  
դություն, երեծաների  
մոտ՝ ուսիս, մեծերի

Վիտամին D՝ կալցիֆերոլ	յուղը), կարագը, ձվի դեղ- նուցը, ձկնկիթը: Ում ճա- ռազայթների շնորհիվ սինթեզվում է մաշկում: Գրեթե բոլոր մրգերն ու բանջարեղենը՝ մասուրը, պղպեղը (կանաչ և կարմիր), հաղարջը, սամիթը, մաղա- դանոսը, թթվածուկը, սպա- նախը, կաղամբը, կարտո- ֆիլը, լոլիկը, ցիտրուսները:	ծծումը բարակ աղիներում և Ca-ի տեղափոխումը արյան միջից դեպի ուկորներ:	մոտ օստեոմալացիա (ոսկրակակղանք): Աղերը լվացվելու հետևանքով ոսկոր- ները դառնում են փիլորուն:
Օրվա պահանջը՝ 2,5 մկգ	հաղարջը, սամիթը, մաղա- դանոսը, թթվածուկը, սպա- նախը, կաղամբը, կարտո- ֆիլը, լոլիկը, ցիտրուսները: Խիստ անկայուն վիտամինն է ասկորբինաթթուն հեշտությամբ քայլայվում է տաքացնելուց, օդի O2-ի և լույսի ազդեցությունից և մթերքի պահպանման ժա- մանակ:	Բարձրացնում է օրգանիզմի կայունությունը ինֆեկցիա- ների նղրծծումը կոլագենի առաջացմանը, անորների պատեր ամրապնդմանը և երկարի ներծծմանը, կար- գավորում է խոլեստերինի փոխանակությունը, օրգա- նիզմի օքսիդավերա- կանգնման գործընթացները:	Լնդերի արյունահո- սություն, ատամների շարժունություն և թա- փում: Մաշկի չորու- թյուն, արյունագողում- ներ և կապտուկներ, ա- խորժակի կորուստ, վերքերի և քերծվածք- ների դանդաղ լավացում:
Վիտամին C՝ ասկորբինաթթուն	Խիստ անկայուն վիտամինն է ասկորբինաթթուն հեշտությամբ քայլայվում է տաքացնելուց, օդի O2-ի և լույսի ազդեցությունից և մթերքի պահպանման ժա- մանակ:	Կարգավորում է ածխա- ջրատների, ամիոնոթթուների փոխանակությունը և էներ- գիայի ստացումը նյարդերի, մկանների և սրտամկանի հա- մար: Մասնակցում է ացետիլ խոլինի նյարդային իմպուլսը փոխանցողի առաջացմանը՝ հետևաբար նաև վեգետատիվ նյարդային համակարգի գոր- կենտրոնացման և աշ- ծունեությանը (սիրտ, մարտ-	Երկարատև դեֆիցիտը (3-6 ամիս) առաջաց- գրատների, ամիոնոթթուների փոխանակությունը և էներ- գիայի ստացումը նյարդերի, մկանների և սրտամկանի հա- մար: Մասնակցում է ացետիլ խոլինի նյարդային իմպուլսը փոխանցողի առաջացմանը՝ հետևաբար նաև վեգետատիվ նյարդային համակարգի գոր- կենտրոնացման և աշ- ծունեությանը (սիրտ, մարտ-
Օրվա պա- հանջը՝ 70-80 մգ 1,2-2,1մգ	Միաը, ենթամթերքները (յարդը, երիկամները), ձա- թիամին վարեղենը, թեփը, լոբազգի- ները, ցածր տեսակի ալյուրի հացերը, ընկույզը, պնդուկը, կաղինը, խմորիչները:	Գրգովածություն, քնի փոխանցողի առաջացմանը՝ հետևաբար նաև վեգետատիվ նյարդային համակարգի գոր- կենտրոնացման և աշ- ծունեությանը (սիրտ, մարտ-	կում, ախորժակի կո- րուստ, մկանների փոխանցողի ապահովելու կարկամում: Ծանր դեպի- ս արյունաստեղծման համար: քերում առաջանում է Մասնակցում է ձարպերի փո- խանակությանը, օքսիդավերա- կանգնման ռեակցիաներին:
Վիտամին B1՝ ոփոքիլավին	Կաթն ու կաթնամթերք- ները, ձուն, յարդը, երի- կամները, հավի միաը, ձկ-	Անհրաժեշտ է գունավոր տեսողությունն ապահովելու կարկամում: Ծանր դեպի- ս արյունաստեղծման համար: քերում առաջանում է Մասնակցում է ձարպերի փո- խանակությանը, օքսիդավերա- կանգնման ռեակցիաներին:	Բերանի խոռոչի լորձաթաղանթների, լեզվի, աչքերի ծիա- ծանաթաղանթների բորբոքում, շրթունք- ների անկյունային չլա- վացող ձաքեր: Խան- գարվում են գունավոր տեսողություն և արյու-
Օրվա պա- հանջը՝ 1,5-2,4մգ	Օրվա պա- հանջը՝ 1,5-2,4մգ	Կաթն ու կաթնամթերք- ները, ձուն, յարդը, երի- կամները, հավի միաը, ձկ-	Բերանի խոռոչի լորձաթաղանթների, լեզվի, աչքերի ծիա- ծանաթաղանթների բորբոքում, շրթունք- ների անկյունային չլա- վացող ձաքեր: Խան- գարվում են գունավոր տեսողություն և արյու-
Վիտամին B6՝ պիրիդոքսին, աղերմին	Կենդանիների, թոշունների միաը, ձկները, յարդը, լոբին, ձավարները, ց/տ ալյուրի	20	

Միաը, յարդը, երիկամները, Մտնում է հյուսվածքներում

Օրվա պահանջ՝ լեզուն, ձկները, հատիկային ամինոթթուների և այլ նյու-  
1,8-2,0մգ կուտուրաները, հացը, թերի փոխանակությունն ի-  
կարտոֆիլը, կաղամբը: թագործող ֆերմենտների  
Վաթնամթերքները և ձուն կազմի մեջ: Անհրաժեշտ է  
Աղքատ են PP-ով, սակայն նյարդային համակարգի,  
Նիացին, Հարուստ են տրիպտո- յարդի, մաշկի, արյունա-  
նիկոստինաթթու, Ֆանով, որի 60մգ-ից օր- ստեղծ օրգանների նորմալ  
հակապելա- գանիզմում առաջանում է աշխատանքի համար:  
գրային վիտամին 1մգ նիացին:

Օրվա պահանջ՝ Բացառապես միայն կեն-  
16-28մգ դանական ծագման  
սննդամթերքները, բուսա-  
կան մթերքներում չի  
պարունակվում:

Վիտամին B12՝ Հատկապես հարուստ  
ցիանկորալամին են յարդը, լեզուն,  
երիկամները, ձվի

Օրվա պահանջ՝ դեղնուցը:  
3մկգ

Ֆոլացին՝ Լյարդը, երիկամները,  
ֆոլաթթու խմորիչները, լոբին,  
հում կանաչիները,  
ձավարները, հացը,

Օրվա պահանջ՝ ծաղկակաղամբը,  
200,0մկգ կաղամբը, բազուկը:

Տրամադրության անկում,  
գրգռվածություն, սրտ-  
խառնոց, ախտրժակի ան-  
կում: Դեմքի մաշկը և գլ-  
խի մազուտ մասերը դառ-  
նում են չոր և թեփուտ:  
Անոթների սկլերոտիկ  
փոփոխություններ,  
սակավարյունություն:

Մտնում է հյուսվածքային  
շնչառությունն ապահովող  
ֆերմենտների մեջ, ազդում է  
հոգեկան գործունեության,  
խոլեստերինի փոխանակու-  
թյան և երիթրոցիտների  
առաջացման վրա: Նպաստում  
է սննդից էներգիա ստանալուն  
և նորմալ ածին:

Անհրաժեշտ է ոսկրածուծում  
նորմալ արյունաստեղծման  
համար, կարևոր դեր ունի  
օրգանիզմում ամինոթթուների  
և ֆոլացինի յուրացման, յար-  
դում ձարպերի փոխանակու-  
թյան և խոլինի առաջացման  
համար:

Մասնակցում է արյունաստեղծ-  
թյուն, լեզուն հարթ է և  
մանր, նուկլեինաթթվի և խոլինի կարմիր:  
սինթեզին: Ֆոլացինի կենսա-  
բանական ազդեցության հա-  
մար անհրաժեշտ է վիտամին  
B12:

Հոգեկան գործունեու-  
թյան, մարտողական,  
սիրտ-անոթային ֆունկ-  
ցիաների խանգարում-  
ներ, ծանր դեպքերում՝  
պելազրա՝ մարմնի բաց  
մասերի մաշկաբորբ,  
լուծ և ընկճվածություն:

Զարգանում է չարորակ  
սակավարյունություն,  
խանգարվում են նաև  
նյարդային և այլ համա-  
կարգերի ֆունկցիաները:  
Առաջանում է թուլու-

թյուն, լեզուն հարթ է և  
մանր, նուկլեինաթթվի և խոլինի կարմիր:  
Խանգարվում են երի-  
թրոցիտների կազմա-  
վորումը, մարտողական  
համակարգի, յարդի  
ֆունկցիաները, առա-  
ջանում է սակավարյու-  
նություն:

Հետևաբար, այսօր սննդի պահանջվող կալորիականության այդպիսի փոքր ծավալում մարդկանց օրգանիզմի պահանջները սննդի անփոխարինելի գործոնների, այդ թվում նաև վիտամինների նկատմամբ, բնական միջոցներով բավարարելու համար անհրաժեշտ են այնպիսի սննդամթերքներ, որոնցում միավոր կալորիային բաժին է ընկնում սննդանյութերի ավելի մեծ քանակություն: Այսինքն պետք է օգտագործել միայն սննդային բարձր խտություն ունեցող սննդամթերքներ:

Հայաստանի բնակչության տարբեր տարիքա-սեռային և մասնագիտական խմբերի՝ վերջին տարիների սննդային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մնանց ավելի քան 80%-ի սննդային օրաբաժինները աղքատ են ֆոլաթթվով, B1, B2, A, վիտամիններով, նույնիսկ վիտամին C-ով, թեև հանրապետությունը դասվում է մրգերով և բանջարեղենով առատ երկրների շարքին:

Այսպիսի իրավիճակում բնակչության վիտամինային ապահովվածությունը լավացնելու առավել բանական և առողջունավետ ուղին զանգվածային օգտագործման մթերքների լրացուցիչ հարստացումն է վիտամիններով, ինչպես նաև կանխարգելիչ նպատակով պոլիվիտամինային պատրաստուկների լայն կիրառումը՝ հատկապես ձմեռ-զարնանային սեզոնին:

Հարկ է նշել, որ սննդային օրաբաժինների վիտամինային ապահովվածության գնահատման համար պետք է հաշվի առնել նաև նրանց կորուստը խոհարարական մշակման և պահպանման ժամանակ:

Սննդամթերքների խոհարարական մշակման ցանկացած ձևի ժամանակ ամենամեծ կորուստը ունենում են C վիտամինը (25-100%), այնուհետև թիամինը (10-65%), գրեթե այդքան է նաև վիտամին A-ի կորուստը: B-կարոտինը բավական ջերմակայուն է. նրա կորուստը հիմնականում պայմանավորված է ուտեստի ճարպային ֆրակցիայի մեջ անցնելով և կաթսայի կամ թավայի պատերին նստելով: Այն կերակրատեսակներում, որոնք պարունակում են B-կարոտինի բարձր և ճարպերի չնչին քանակություն՝ B-կարոտինի կորուստն աննշան է:

Պատրաստի կերակրատեսակներում վիտամինների պահպանման վրա ազդող գլխավոր գործոններից մեկը մթերքների ջերմային մշակման տևողությունն է: Վիտամիններն ավելի լավ պահպանվում են տապակելիս:

Խաշելու ժամանակ նրանց կորուստն ավելի բարձր է, որովհետև մի մասը քայլայվում է ջերմության երկարատև ազդեցությունից, մի մասն էլ անցնում է եփաջրի մեջ: Հետևապես սննդային օրաբաժիններում բավարար տեսակարար կշիռ պետք է ունենան հում բանջարեղենը, միքան ու հատապտուղները: Անհրաժեշտ է լայնորեն կիրառել սննդամթերքների խոհարարական մշակման այն ձևերը, որոնք չեն պահանջում ջերմային երկարատև մշակում: Բանջարեղենն ու կարտոֆիլը նախընտրելի է եփել կճեպով կամ ամբողջական:

Պատրաստի ճաշատեսակներում վիտամինների կորուստը պայմանավորված է ոչ միայն ջերմային մշակման եղանակով և տևողությամբ, այլև այս կամ այն վիտամինի ֆիզիկա-քիմիական հատկություններով:

Այս տեակետից կարևոր է վիտամին C-ն, արի բարձր կորուստը պայմանավորված է ոչ միայն բարձր ջերմության ազդեցությամբ նրա քայլայումով և եփաջրին անցնելով, այլև այս վիտամինի չափազանց անկայունությամբ զանազան օքսիդիչների՝ թթվածնի, լույսի, մետաղների և այլն նկատմամբ, որոնց ազդեցությամբ արագ օքսիդանալով սենյակային ջերմաստիճանում 2 օր պահելուց հետո կորցնում է վիտամին C-I 80%-ը: Հետևաբար վիտամինակիր սննդամթերքները պետք է պահել սառը և մութ տեղերում:

Վիտամին C-ն լավ պահպանվում է թթու դրած կաղամբում: Աղաջրով ծածկված կաղամբում 6-7 ամիս անց վիտամինային ակտիվության կորուստ գրեթե չի լինում, իսկ բաց ամանում առանց աղաջրի 24 ժամ պահելուց հետո նրա կորուստը հասնում է 75%-ի:

Թեև A, E, K վիտամիններն ու կարոտինոիդները բավական կայուն են բարձր ջերմաստիճանի ազդեցությանը, սակայն խիստ զգայուն են թթվածնի և լույսի նկատմամբ: Ուստի յուղերը պետք է պահել փակ ու մութ տեղում:


B2 և B6 վիտամիններ նույնպես բավարար չափով կայուն են բարձր ջերմաստիճանի ազդեցությանը, սակայն խիստ զգայուն են լույսի նկատմամբ, իսկ B1-ը բարձր ջերմաստիճանում, հատկապես հիմնային միջավայրում, արագորեն քայլայվում է:

## ՎԻՏԱՄԻՆ C-ի (ԱՍԿՈՐԲԻՆԱԹԹՎԻ) ՈՐՈՇՈՒՄԸ

Ասկորբինաթթուն (վիտամին C) կարևոր նշանակություն ունի նյութափոխանակության, առանձնապես սպիտակուցների յուրացման, շարակցային հյուսվածքի բնական վիճակի ապահովման, օրգանիզմի հյուսվածքների վերականգնման համար: C վիտամինի անրավարարության դեպքում բարձրանում է արյունատար անոթների թափանցելիությունը, խախտվում է աճառային և ուկրային հյուսվածքների կառուցվածքը և առաջանում է լնղախտ: Մարդու օրգանիզմում ասկորբինաթթու չի առաջանում, այն ստացվում է միայն սննդի հետ: C վիտամին պարունակվում է բանջարեղենում, մրգերում, հատապտուղներում: C վիտամինով հարուստ են մասուրը, կանաչ սոխը, լոլիկը, տաքեղը (հատկապես՝ կարմիրը), կարտոֆիլը, սև հաղարջը, մորին, թթվածուկը, կիտրոնը, նարինջը և այլն:

Մնանական պարունակության վրա ազդում են պահպանման եղանակը, տևողությունը և խոհարարական մշակումը: C վիտամինն արագ քայլայվում է մաքրած մրգերում և բանջարեղենում:

Ասկորբինաթթվի որոշման ներքորերյալ եղանակները հիմնված են ասկորբինաթթվի և 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլի միջև ընթացող օքսիդավերականգման ռեակցիայի վրա: 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլը (Տիլմանսի ռեակտիվը) միաժամանակ ինդիկատոր է, որը չեզոք և հիմնային միջավայրերում ունի կապույտ գույն, իսկ թթվային միջավայրումէ կարմիր: Ասկորբինաթթվի և 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլի փոխազդեցության ժամանակ ասկորբինաթթուն օքսիդանում է մինչև դեհիդրոասկորբինաթթու, իսկ ինդիկատորը վերականգնվում է՝ վերածվելով անգույն ձևի, այսինքն՝ ասկորբինաթթուն վերականգնում է 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլի նատրիումական աղի լուծույթը՝ վերածվելով դեհիդրոասկորբինաթթվի:



**Անհրաժեշտ սարքեր:** 2 մլ-անց երկու միկրոբյուրետ, հախճապակյա չակից, ապակու փոշի, 10 մլ-անց պիպետ, 50 մլ-անց հախճապակյա թասեր, 100 մլ-անց չափիչ կոլբաներ, ապակյա ձագարներ, ողոյա ֆիլտրեր:

**Ուեակտիվներ:** Աղաթթվի 10%-անոց լուծույթ, 0,001Մ 2,6-դիքլորֆենոլինոֆենոլի լուծույթ (նատրիումական աղ), վիտամին C պարունակող հետազոտվող լուծույթ, ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթ:

## Վիտամին C-ի ռակական որոշումը

2,6-դիքլորֆենոլինոֆենոլի նատրիումական աղի լուծույթն ունի կապույտ գույն՝ շնորհիվ դիքլորֆենոլինոֆենոլի անիոնի (քինախային կառուցվածք) գույնի, թթվային միջավայրում դիքլորֆենոլինոֆենոլի չիտոցված մոլեկուլն ունի վարդագույն գունավորում, վերականգնման ժամանակ գունագրկում է:

**Փորձի ընթացքը:** Երկու փորձանորի մեջ լցնում են 2-3մլ վիտամին C պարունակող հետազոտվող լուծույթ՝ նարնջի հյութ: Փորձանորներից մեկի մեջ լցնում են մի քանի կաթիլ ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթ և եռացնում, որպեսզի վիտամին C-ն քայրայվի: Երկու փորձանորների մեջ լցնում են 1-2 կաթիլ աղաթթու և հետո (թերև թափահարելով) կաթիլներով ավելացնում 2,6-դիքլորֆենոլինոֆենոլի նատրիումական աղի լուծույթ: Վիտամին C-ի առկայության դեպքում լուծույթը գունագրկում է: Ինդիկատորի ավելացումը շարունակելիս լուծույթը դառնում է վարդագույն, քանի որ ասկորբինաթթուն արդեն օքսիդացել է և ինդիկատորը այլևս չի վերականգնվում: Այն փորձանորում, որում վիտամին C-ն քայրայվել էր, գունագրկում տեղի չի ունենում, և ինդիկատորի նույնիսկ 1-2 կաթիլի դեպքում առաջանում է վարդագույն երանգ:

### 5.2. Վիտամին C-ի քանակական որոշումը 2,6-դիքլորֆենոլինոֆենոլով (ըստ Տիլմանսի)

Վիտամին C-ի քանակական որոշումը նույնպես հիմնված է ասկորբինաթթվի 2,6-դիքլորֆենոլինոֆենոլի վերականգնելու հատկության վրա: 2,6-դիքլորֆենոլինոֆենոլի լուծույթով տիտրում են հետազոտվող լուծույթը թթվային միջավայրում, որը կանխում է ասկորբինաթթվի քայրայումը: Ասկորբինաթթվի ճշգրիտ որոշմանը կարող են խանգարել հեշտ օքսիդացող նյութեր, օրինակ՝ գլյուտատիոնը, ցիստեինը:

Տիտրվող լուծույթը մնում է անգույն, մինչև որ ավարտվում է ասկորբինաթթվի օքսիդացման ռեակցիան: Ինդիկատորի կաթիլի ավելցուկը լուծույթին տալիս է բաց վարդագույն երանգ: Թթվային մզվածքի տիտրման համար ծախսված ինդիկատորի քանակով որոշում են վիտամին C-ի քանակը:

Այս եղանակն օգտագործում են թարմ և վերամշակված պտուղների, բանջարեղենի, կարտոֆիլի և այլ բուսական ծագման մթերքների մեջ՝ վիտամին C-ի քանակական որոշման համաց:

**Փորձի ընթացքը:** 5 գ սննդամթերքի կարմիր պղպեղի կշռանմուշը (կախված վիտամին C-ի քանակից) տեղափորում են հախճապակյա թասի մեջ և սանդաթակիչով տրորում 5-10 գ ապակու թոշու և 5 մլ 2%-անոց աղաթթվի լուծույթի հետ: Այնուհետև առանց կորուստների թասի պարունակությունը տեղափորում են 50 մլ տարողությամբ չափից կոլբայի մեջ (թասն ու սանդաթակիչը լվանալով աղաթթվի նույն լուծույթվ) և թորած ջրով հասցնում ճափազծին: Կոլբայի պարունակությունը խառնում են, ֆիլտրում թղթե ֆիլտրով, ֆիլտրածն օգտագործում են վիտամին C-ի քանակական որոշման համար:

Երկու կոնաձև կոլբաներում լցնում են 5 մլ ֆիլտրատ և տիտրում 0,001 U 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլի լուծույթում մինչև վարդագույն երանգի առաջացումը, որը չի անհետանում 30 վրկ: Երկու գուգահեռ որոշումները միմյանցից չպետք է տարբերվեն ավելի քան 0,03-0,04 մլ-ով: Ասկորբինաթթվի քանակը հաշվում են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1 մլ 0,001 U 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլի լուծույթին համապատասխանում է 0,088 մգ ասկորբինաթթու:

5գ սննդամթերքում կարմիր պղպեղում ասկորբինաթթվի քանակը որոշելու համար հաշվարկը կատարում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0,088\text{մգ}}{1\text{մլ}} \bullet \frac{50\text{մլ}}{5} \bullet \frac{V\text{մլ}}{5\text{մլ}} \bullet 100\% =$$

որտեղ X-ը ասկորբինաթթվի քանակն է, %-ով, V-ն՝ տիտրման համար ծախսված 2,6-դիքլորֆենոլինդոֆենոլի լուծույթի ծավալը, մլ-ով:

$$V_1 = 9,8\text{մլ}$$

$$V_2 = 10,2\text{մլ}$$

$$V_3 = 10,1\text{մլ}$$

$$V_{\text{տի}} = \frac{9,8 + 10,2 + 10,1}{3} = 10,033\text{մլ}$$

3

$$X = \frac{0,088\text{մգ}}{1\text{մլ}} \bullet \frac{50\text{մլ}}{5} \bullet \frac{10,033\text{մլ}}{5\text{մլ}} \bullet 100\% =$$

$$= \frac{4414,52}{25000} = 0,1765808\%$$

$$\begin{array}{l|l} 5000\text{մգ} - 100\% & x = 8,82904 \bullet \text{մգ}(c) \\ x & - 0,1765808 \end{array}$$

5 գր կարմիր պղպեղում կա 8,82904 մգ վիտամին C:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վիտամինները կենսաբանական ակտիվ նյութերն են, որոնք սպիտակուցների, լիպիդների և ածխաջրատների հետ կարևոր են մարդու օրգանիզմի նորմալ կենսունակության համար: Վիտամինները կենսաբանական կատալիզատորներ են, որոնք փոխազդում են ֆերմենտների և հորմոնների հետ, մի շաբթ ֆերմենտների բաղադրության մեջ առկա են որպես կոֆակտորներ կամ մասնակցում են դրանց սինթեզին: Վիտամինների պակասը կարող է հանգեցնել օրգանիզմում նյութափոխանակությունը կարգավորող ֆերմենտների և հորմոնների առաջացման խանգարումների: Բերանի խոռոչի լորձաթաղանթը շատ զգայուն է վիտամինների պակասի նկատմամբ: Դրանց անբավարարությունը նվազեցնում է բերանի խոռոչի լորձաթաղանթի ռեզիստենտականությունը տրավմաների, մանրէների ազդեցության նկատմամբ, դանդաղում են ռեզեներացիայի հատկությունները: Մարդու օրգանիզմ վիտամինների ներմուծման հիմնական աղբյուրը սննդամթերքն է: Ուստի կարևոր է ոչ միայն սնունդով ներմուծվող վիտամինների քանակը, այլև սննդի որակական կազմը: Օրինակ՝ ածխաջրերով հարուստ սնունդ ընդունելու դեպքում բարձրանում է B1 վիտամինի անհրաժեշտ քանակը, իսկ սպիտակուցների անբավարարության դեպքում նվազում է B2-ի, նիկոտինաթթվի և ասկորբինաթթվի յուրացումը:

Սննդի մեջ վիտամինների պակասն օրգանիզմում տարբեր խանգարումների տեղիք կարող է տալ, որոնք արտահայտվում են ընդհանուր կամ ոչ հատկանշական ախտանիշներով, օրինակ. ախտրժակի բացակայությամբ, մազաթափությամբ, աճի դադարով, քաշի կտրուկ նվազումով և այլն: Այս ընդհանուր ախտանիշներին այնուհետև հաջորդում են այնպիսիք, որոնք հատուկ են հենց այս կամ այն վիտամինի պակասին: Դրանք հատկանշական ախտանիշներն են: Այն հիվանդությունները, որոնք զարգանում են վիտամինների քաղցի կամ պակասի պայմաններում, կոչվում են ավիտամինոզներ (աճի դանդաղում, ռախիտ, պելլազրա և այլն):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սննդի քիմիա: Լ.Վ. Կարապետյան, Գ.Գ. Թոկմանջյան : Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2021:
2. Դպրոցական մեծ հանրագիտարան:
3. Կենսաբանություն: Մարդ: Ս.Հ. Սիսակյան, Տ.Վ. Թանգամյան, Գ.Ի. Միրզոյան: Երևան Տիգրան Մեծ, 2014:
4. Մարդու անատոմիա: Երկու հատոր, Է.Ի. Բորզյակ, Ե.Ա. Դոբրովոլյսկայա, Վ.Ս. Ռեվազով. Մ.Դ. Սապիկ: Երևան, Լուս, 1992: